

Թիւ 26492  
Օգոստոս 22, 1979

Ազնուափայլ  
Տիկին նէլի Գասպարեան  
Նիւ ծըրզի.

Սիրելի Տիկին Գասպարեան,

Սաացած ենք Օգոստոս 20, 1979 թուակիր ժեր նամակը: Զեր սիրելի զաւկին՝ Գասպարի թաղման արարողութեան մեր մասնակցութիւնը մեր եկեղեցական պարտականութեանց մէկ մասը կը նկատենք: Գասպար Հայց. Եկեղեցւոյ հաւատաւոր, հաւատարիմ եւ նուիրեալ զաւակներէն մէկն էր՝ որ իր կարողութիւնն ու ժամանակը անսակարկ կերպով ի սպաս դրաւ անոր յառաջդիմութեան եւ պայծառութեան:

Մեզի համար եւս մեծ կորուսա մըն է Գասպարի վաղաժամ մահը: Կ'աղօթեանք որ Տէրը անոր ազնիւ հոգիին պարզեւէ խաղաղութիւն եւ յաւիտենական հանգիստ:

Այս առթիւ ժեր ներփակած նուէրը պէտք է զանց առնէիր, շատ հասկնալի պատճառով: Ջայն պէտի յատկացնենք Գասպարի հաւատացած բարի նպատակներէն մէկուն:

Զեզի, Ելիզապէթին ու զաւակներուն եւ ժեր հարազաներուն կը ցանկանք հոգեւկան արիութիւն եւ երկնային միսիթարութիւն:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՁԵՊԻՍԿՈՊՈՒ  
Առաջնորդ